ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1950 *Общественные науки*

Հ. Կարապետյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1933—1934 Թ.Թ.)

Առաջին հնգամյակի իրագործումով հզոր նախադրյալներ ստեղծվեցին սոցիալիզմի հետագա էլ ավելի աճման համար։ Առաջին հնգամյակի ստեղծած նյութական-տեխնիկական բազայի վրա Սովետական Միությունը անցավ նոր՝ երկրորդ հնգամյա պլանի կատարմանը։

ՍՍՌՄ-ի անսպառ բնական հարստությունները, սոցիալիստական շինարարության բոլշևիկյան տեմպերը, բանվորական և կոլխոզային լայն մասսաների աճող ակտիվությունը ու Լենինի—Ստալինի պարտիայի ճիշտ գիծը լիովին ապահովում էին երկրի տնտեսության արտադրողական ուժերի նոր, ավելի վիթխարի ծավալումը՝ երկրորդ հնգամյակում։

1934 թ. հունվարին գումարվեց պարտիայի 17-րդ համագումարը, որը պատմության մեջ մտավ որպես հաղթողների համագումար։ Համագումարն ամփոփեց ՍՍՌՄ-ում սոցիալիզմի պատմական հաղթանակների հանրագումարները։ Տնտեսության սոցիալիստական սիստեմի տեսակարար կշիռը արդյունաբերության բնագավառում համագումարի նախօրեին կազմում էր երկրի ամբողջ արդյունաբերության 99 տոկոսը։ Սոցիալիստական գյուղատնտեսությունը ընդգրկել էր երկրի բոլոր ցանքերի տարածության մոտ 90 տոկոսը։[1]

Ապրանքաշրջանառության բնագավառից կապիտալիստական տարրերը ամբողջովին վտարվել էին։ ՍՍՌՄ-ի էկոնոմիկայից վերացվել էին նահապետական, մասնավոր-տնտեսատիրական կապիտալիզմի և պետական կապիտալիզմի կացութաձևերը, իսկ մանր ապրանքային արտադրությունը հետ էր մղված երկրորդական դիրքերը։ Այդպիսով սոցիալիստական կացութաձևը անբաժան կերպով տիրապետող էր դարձել ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ։

Համագումարը քննեց և հաստատեց ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման երկրորդ հնգամյա պլանը, որի խնդիրները ավելի մեծ էին, քան առաջին հնգամյակի խնդիրները։

Երկրորդ հնգամյակի հիմնական քաղաքական խնդիրն էր՝ «Վերջնականապես վերացնել կապիտալիստական տարրերն ու դասակարգերն ընդհանրապես, լիակատար կերպով ոչնչացնել դասակարգային տարբերություններ ու շահագործում առաջացնող պատճառները, և վերացնել կապիտալիզմի մնացորդներն էկոնոմիկայի ու մարդկանց գիտակցության մեջ և երկրի աշխատավոր բնակչությանը դարձնել անդասակարգ սոցիալիստական հասարակության գիտակից ու ակտիվ կառուցողներ»։[2]

---

[1] *Համ Կ(բ) Պարտիայի պատմություն, համառոտ դասընթաց, էջ 438։*

[2] *Համկ(բ)Պ 17-րդ համագումարի բանաձևերը, էջ 7, Կուսհրատ, Իաքու, 1934 թ.։*

Շահագործող դասակարգերի մնացորդների վերջնական վերացումը և ժողովրդական եկամտի ընդհանուր աճումը, որն ամբողջապես անցնում է աշխատավորների տրամադրության տակ, ապահովում էր երկրորդ հնգամյակում բանվորների և կոլխոզնիկների բարեկեցության էլ ավելի արագ վերելքը երկրորդ հնգամյակում, ռեալ աշխատավարձի նշանակալի աճում ու աշխատավորների սպառման մակարդակի բարձրացումը 2—3 անգամ։[1]

Այդ խնդիրների իրականացումը հնարավոր էր ամբողջ ժողովրդական տնտեսության ծավալուն տեխնիկական վերակառուցման հիման վրա, հետևաբար՝ երկրորդ հնգամյակի հիմնական տնտեսական խնդիրն էր «ավարտել ողջ ժողովրդական տնտեսության վերակառուցումը»,[2] որի վճռական նախապայմանը հանդիսանում էր նոր տեխնիկայի և նոր արտադրությունների յուրացումը։

«Առաջին հնգամյակի ժամանակաշրջանում,— ասում է ընկեր Ստալինը,— մենք կարողացանք կազմակերպել նոր շինարարության խանդավառությունը, պաթոսը և վճռողական հաջողություններ ձեռք բերինք։ Այդ շատ լավ է։ Բայց այժմ այդ քիչ է։ Այժմ այդ գործը մենք պետք է լրացնենք նոր գործարանների և տեխնիկայի յուրացման խանդավառությամբ, պաթոսով, աշխատանքի արտադրողականության լուրջ բարձրացումով, ինքնարժեքի լուրջ կրճատումով»։[3]

Երկրորդ հնգամյակի վերջում արդյունաբերության արտադրանքը 1932 թվականի չափի համեմատությամբ ավելանալու էր 2,1 անգամ, և մոտ 8 անգամ գերազանցելու էր արտադրության նախապատերազմյան մակարդակը։

Կապիտալ աշխատանքների ընդհանուր ծավալն ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ երկրորդ հնգամյակում կազմելու էր 133 միլիարդ ռուբլի։ Արդյունաբերության ասպարեզում նախատեսվում էր ներդնել 69,5 միլիարդ ռուբլի, առաջին հնգամյակի 25 միլիարդ ռուբլու դիմաց, այդ թվում արտադրության միջոցներ արտադրող արդյունաբերության բնագավառում 53,4 միլիարդ ռուբլի՝ 2,5 անգամ ավելի, քան նախորդ հնգամյակում։[4]

Սպառման առարկաներ արտադրող արդյունաբերության բնագավառում հիմնական ներդրումները կազմելու էին 16,1 միլիարդ ռուբլի, կամ 4,6 անգամ ավելի, քան առաջին հնգամյակում։[5]

Գյուղատնտեսության արագ զարգացումը պահանջում էր լիովին ավարտել կոլեկտիվացումը, ամրացնել կոլխոզները և սովխոզները տնտեսապես ու կազմակերպչորեն, տեխնիկապես վերակառուցել ամբողջ գյուղատնտեսությունը։

«... Գյուղատնտեսության արտադրանքի համար նշված աճին,— ասվում է համագումարի որոշման մեջ,— կարելի է հասնել միմիայն կոլեկտիվացման լիակատար ավարտումով և ամբողջ գյուղատնտեսության տեխնիկական վերակառուցումն իրականացնելով»։[6] Համագումարը դիրեկտիվ տվեց «հիմնականում ավարտել գյուղատնտեսության մեքենայացումը»։[7]

---

[1] ՀամԿ(բ)Պ 17-րդ համագումարի բանաձևերը, էջ 7, Կուսհրատ, Բաքու, 1934 թ.։
[2] Նույն տեղում, էջ 8։
[3] Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 462։
[4] ՀամԿ(բ)Պ 17-րդ համագումարի բանաձևերը։
[5] Նույն տեղում։
[6] ՀամԿ(բ)Պ 17-րդ համագումարի բանաձևերը, էջ 14։
[7] Նույն տեղում, էջ 15։

ՍՍՌՄ-ի ժողովրդական տնտեսության զարգացման երկրորդ հնգամյա պլանը Հայկական ՍՍՌ-ի համար նախատեսնում էր ամբողջ ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման ավարտումը։

1933—1937 թ. թ. ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ ներդրվելիք կապիտալ միջոցները գերազանցում էին առաջին հնգամյակում կատարված ներդրումներից՝ ավելի քան երեք անգամ։ Երկրորդ հնգամյակում առանձնակի տեղ էր գրավում մետաղաձուլման զարգացումը և քիմիական արդյունաբերության նոր օբեկտների կառուցումը։ Խոշոր չափով լայնանալու էր շինանյութերի արդյունաբերությունը։ Էներգետիկայի բնագավառում նոր հրսկայական վերելք էր կատարվել Հայաստանում։ Ավարտվել էր Քանաքեռգէսի շինարարությունը, Զորագէսի երկրորդ և երրորդ ագրեգատների գործարկումը և կառուցվելու էին մի շարք շրջանային էլեկտրոկայաններ։

Զարգացման խոշոր հեռանկար էր բացվում թեթև արդյունաբերության համար։ Մի շարք նոր գործարանների կառուցմամբ ու գործարկմամբ զգալիորեն բարձրանալու էր թեթև արդյունաբերության համախառն արտադրանքի չափը, 1932 թ. համեմատությամբ այն ավելանալու էր մոտ 16 անգամ։

Երկրորդ հնգամյակում խոշոր չափով ծավալվելու էր սննդի արդյունաբերությունը, նախատեսվում էր ավարտել Երևանի Մակարոնի գործարանի, Լենինականի Մսի կոմբինատի, Սարդարաբադի (Հոկտեմբերյանի) Կոնսերվի գործարանի կառուցումը, ընդարձակել Երևանի Կոնսերվի գործարանը և այլն։

1933—1937 թ. թ. ժամանակաշրջանում նախատեսվում էր ռեսպուբլիկայի կուլտուրական շինարարության խոշոր աճ։

Երկրորդ հնգամյակի առաջին երկու տարիների ընթացքում՝ 1933—1934 թ. թ. Հայաստանի ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում ներդրվեց 312,2 միլիոն ռուբլի, մոտավորապես այնքան, ինչքան ամբողջ առաջին հնգամյակի տարիներին, որը վկայում է շինարարության հսկայական ծավալի մասին։ Այդ ներդրումների 55 տոկոսից ավելին կազմում էր արդյունաբերության և էլեկտրաշինարարության բաժինը։[1]

1933—1934 թ. թ. արդյունաբերության և էներգետիկայի համար հատկացված ներդրումների զգալի մասը ծախսվեց մի շարք խոշոր շինարարությունների ավարտման համար։

Այդ տարիներին գործարկվեցին արդյունաբերության մի շարք նոր օբեկտներ, որի շնորհիվ է՛լ ավելի բարձրացավ նրա առաջատար դերը երկրի ժողովրդական տնտեսության մեջ։ Երկրորդ հնգամյակի առաջին երկու տարիներին գործող ձեռնարկությունների շարքն անցան Ղարաքիլիսայի Մյասնիկյանի անվան կոմբինատը, Դավալուի ցեմենտի գործարանը, Ալավերդու պղինձ-արջասպի, Երևանի Կարի և Ծխախոտի գործարանները։ Նույն ժամանակամիջոցում շահագործման հանձնվեցին 7 էլեկտրակայան։

1934 թ. ավարտվեցին և շահագործման հանձնվեցին Զորագէսի երկրորդ և երրորդ ագրեգատները, Շաքիի, Մեղրու և մի շարք ուրիշ էլեկտրակայաններ։ Այդ բոլորի հետևանքով, 1932 թ. համեմատությամբ 1934 թվականին բավականաչափ բարձրացավ ռեսպուբլիկայի էլեկտրակայանների ընդհանուր կարողությունը, ինչպես և էլեկտրաէներգիայի արտադրությունը, որը կազմեց 122,8 միլիոն կիլովատ ժամ, 1932 թ. 57,1 միլիոն կիլովատ ժամի դիմաց։[2]

[1] Հայկական ՍՍՌ ՊԿԱ ֆ. 40/113, գ. 2217, թ. 6։

[2] «Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով», էջ 70։

Արագ տեմպերով առաջ էր գնում Քանաքեռգէսի շինարարությունը։ Հայկական ՍՍՌ էլեկտրոֆիկացման գործը հետզհետե լայն չափեր էր ընդունում, որը հետևանք էր ոչ միայն երկրի հարուստ էներգետիկ հնարավորությունների լայն օգտագործմ։ան, այլև էլեկտրակայանների փնջավորման ծրագրի իրականացման։

Ռեսպուբլիկայի արդյունաբերության ընդհանուր արտադրանքը 1926—1927 թ. թ. անփոփոխ գներով առաջին հնգամյակի վերջում եղած արտադրանքի համեմատությամբ 1933—1934 թ. թ. աճեց 47 տոկոսով։ Այս բոլորի շնորհիվ արդյունաբերության տեսակարար կշիռը գյուղատնտեսության համեմատությամբ բարձրացավ և 1934 թվին կազմեց 64,9 տոկոս։

Զգալի թափ ստացավ արհեստագործական կոոպերացիայի ձեռնարկությունների աշխատանքը, ավելացավ նրանց արտադրանքը, արտադրվող ապրանքների տեսակները։ Արհեստագործական կոոպերացիայի ընդհանուր արտադրանքը 1932 թվի 22,3 միլիոն ռուբլուց 1933 թվին հասավ 25 միլիոն ռուբլու։

Արդյունաբերական ծավալուն շինարարության, բազմաթիվ նոր արդյունաբերական ձեռնարկությունների գործարկման հետևանքով արագ թափով ավելանում էր բանվորների քանակը։

Երկրորդ հնգամյակի առաջին երկու տարիների ժամանակամիջոցում Հայաստանի բանվորներն ու աշխատավորները բոլշևիկների մեծ պարտիայի ղեկավարությամբ, ռուս մեծ ժողովրդի օգնությամբ և անձամբ ընկեր Ստալինի մշտական հոգատարության շնորհիվ հաջողությամբ կատարում էին հնգամյա պլանը։ Հայկական ՍՍՌ-ն ողջ Սովետական Միության ժողովուրդների հետ միասին քայլում էր սոցիալիստական անդասակարգ հասարակարգի կառուցման ուղիով։

Երկրորդ հնգամյակի առաջին տարիներին զգալի նվաճումներ ձեռք բերվեցին գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման, նրա տեխնիկական հագեցվածության, կոլխոզների տնտեսական-կազմակերպական ամրացման բնագավառներում։

Առաջին հնգամյակի ժամանակաշրջանում բոլշևիկների պարտիան և Սովետական Միության բանվոր դասակարգը խոշոր հաղթանակներ ձեռք բերին գյուղում սոցիալիզմի կառուցման գործում։ Կոլխոզային կարգը հաղթանակեց վերջնականապես։

Ընկեր Ստալինը «Գյուղի աշխատանքի մասին» իր պատմական ճառում կոլխոզային կարգի հաղթանակի և կոլխոզային առևտրի սկսման շնորհիվ գյուղում ստեղծված նոր իրադրության խոր վերլուծումով բացահայտեց գյուղատնտեսության ղեկավարման ասպարեզում գոյություն ունեցող թերությունները։

Ելնելով գյուղում ստեղծված նոր իրադրությունից, ընկեր Ստալինը նշում է, որ «պատասխանատվության ծանրության կենտրոնը տնտեսությունը վարելու համար հիմա առանձին գյուղացիներից տեղափոխվել է կոլխոզի ղեկավարությանը, կոլխոզի ղեկավար կորիզին»։[1] Իսկ այս նշանակում է, որ պարտիան այժմ չի կարող այլևս սահմանափակվել ղեկավարման հին ձևերով, միջամտության առանձին գործողություններով։ Պարտիան հիմա պետք է «իր

[1] Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 491։

ձեռքը վերցնի կոլխոզների ղեկավարությունը, իր վրա վերցնի պատասխանատվությունն աշխատանքի համար և օգնի կոլխոզնիկներին՝ իրենց տնտեսությունն առաջ տանելու գիտության և տեխնիկայի տվյալների հիման վրա»։[1]

Կոլխոզային կարգի հաղթանակով դասակարգային պայքարը գյուղում նոր ձևեր ընդունեց։ Թշնամին ջախջախված էր, բայց ոչնչացված չէր։ Նա կոլխոզի և սովետական իշխանության դեմ պայքարելու նպատակով փոխել էր իր տակտիկան։ «Թշնամին,— ասում է ընկեր Ստալինը,— հասկացավ փոխված իրադրությունը, հասկացավ նոր կարգերի ուժն ու հզորությունը գյուղում և հասկանալով այդ, վերակառուցվեց, փոխեց իր տակտիկան,— ուղղակի գրոհից կոլխոզների դեմ՝ անցավ դանդաղ, խրամահատման աշխատանքի»։[2]

Բացահայտելով թշնամու պայքարի նոր տակտիկան, նրա պայքարի նոր մեթոդները, ընկեր Ստալինը սովորեցնում է, որ այժմ թշնամուն չպետք է փնտրել կոլխոզից դուրս, և այն կերպարանքով, ինչպիսին նա հայտնի է մեզ պլակատներից։ Այդպիսի կերպարանքով կուլակներ վաղուց գոյություն չունեն։ «Այժմյան կուլակներն ու ենթակուլակները, այժմյան հակասովետական տարրերը գյուղում,— ասում է ընկեր Ստալինը,— դրանք մեծ մասամբ «հանդարտ», «քաղցրիկ», գրեթե «սուրբ» մարդիկ են։ Հարկավոր չէ կոլխոզից հեռու որոնել նրանց։ Նրանք նստած են հենց կոլխոզի մեջ»,[3] գրավելով պահեստապետների, հաշվետարների, քարտուղարների և այլ պաշտոններ։ Թաքնվելով կոլխոզին «կողմնակից» լինելու դիմակի տակ, նրանք ամեն կերպ վնասում էին կոլխոզին, փորձում էին վիժեցնել հացամթերումները, փչացնում էին կոլխոզի ունեցվածքը, հափշտակում այն, սպանում ձին, փչացնում մեքենան և այլն։

Ընկեր Ստալինի ցուցումներով ՀամԿ(ր)Պ Կենտկոմի 1933 թվի հունվարյան պլենումը որոշեց ՄՏԿ-ներին և սովխոզներին կից կազմակերպել քաղաքական բաժիններ։ Կոլխոզներին օգնելու նպատակով գյուղ ուղարկվեցին 17 հազար պարտիական աշխատողներ քաղբաժիններում աշխատելու։ Կոլխոզների ղեկավարությունն ուժեղացնելու և կոլխոզները ամրապնդելու նպատակով ընկեր Ստալինը առաջ քաշեց կոլխոզները բոլշևիկյան դարձնելու լոզունգը, որի իրականացման մեջ առանձնակի դեր կատարեցին քաղբաժինները։ Քաղբաժինները հանդիսացան բոլշևիկյան պարտիայի քաղաքականության անցկացնողները գյուղում։ Նրանք դաստիարակում էին միլիոնավոր կոլխոզնիկներին Լենինի—Ստալինի գաղափարներով, կոլխոզային կարգերին նվիրվածության ոգով։ Քաղբաժինները ամրացրին կոլխոզները կազմակերպական-տնտեսական տեսակետից, աճեցրին կոլխոզային նոր կադրեր, կարգի բերեցին կոլխոզի տնտեսական ղեկավարությունը, բարձրացրին կոլխոզային մասսաների քաղաքական մակարդակը և մոբիլիզացրին նրանց՝ բոլշևիկորեն կատարելու իրենց պարտավորությունները պետության հանդեպ։

1933 թ. փետրվարի 15—19-ը Մոսկվայում տեղի ունեցավ հարվածային կոլխոզնիկների Համամիութենական առաջին համագումարը, որը կոլխոզշինարարության պատմության մեջ կարևոր տեղ գրավեց։ Համագումարի աշխատանքներն ընթացան ընկեր Ստալինի անմիջական ղեկավարությամբ։ Համագումարն իր աշխատանքներն ավարտեց ընկեր Ստալինի պատմական ծրագրա-

---

1 Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 491։

2 Նույն տեղում, էջ 496։

3 Նույն տեղում։

յին ճառով և ընդունեց Սովետական Միության բոլոր կոլխոզնիկներին ուղղված դիմում։

Համագումարը մի հայտարարի բերեց մասսայական կոլխոզային շինարարության արդյունքները, ցույց տվեց, թե ինչպիսի հսկայական նվաճումներ են ձեռք բերել կոլխոզները այդքան կարճ ժամանակամիջոցում, ինչպես են նրանք պայքարել նոր սոցիալիստական գյուղի համար։ Մեր երկրի առաջավոր կոլխոզների և ավելի քան 14,5 միլիոն կոլխոզային գյուղացիների անունից ողջունելով կոլխոզային կարգերի կերտողին՝ ընկեր Ստալինին, համագումարի մասնակից հարվածային կոլխոզնիկներն իրենց ընդունած դիմումի մեջ գրում են. «Արդեն մեր պրակտիկայով ու փորձով հաստատվեցին Լենինի այն խոսքերը, թե միմիայն կոլտնտեսությունների միջոցով կարելի է դուրս բերել չքավոր ու միջակ գյուղացիությունը դարավոր կարիքից ու աղքատությունից»։[1]

Հարվածային կոլխոզնիկների առաջին համագումարում արտասանած իր ճառում ընկեր Ստալինը առաջ քաշեց կոլխոզնիկներին ունևոր դարձնելու պատմական լոզունգը։ Նա ասաց, որ կոլխոզային շինարարության գործնական շոշափելի արդյունքներն այն են, որ գյուղացիությունը ոտք դրեց կոլխոզի ուղին։ Սակայն այդ առաջին քայլն էր, որի վրա մենք չպետք է կանգ առնենք, այլ պետք է շարժվենք առաջ, կատարենք երկրորդ քայլը։ «Ո՞րն է այդ Երկրորդ քայլը,— հարց է տալիս ընկեր Ստալինը, և պատասխանում է,— այդ քայլն է է՛լ ավելի վեր բարձրացնել կոլտնտեսականներին,— թե նախկին չքավորներին, թե նախկին միջակներին։ Այդ քայլն է՝ ունևոր դարձնել բոլոր կոլտնտեսականներին։ Այո, ընկերներ, ունևոր դարձնել»։[2]

Սովետական ժողովրդի մեծ առաջնորդը հանճարեղ կերպով ցույց տվեց, որ կոլխոզնիկներն ունեն այն ամենը, ինչ անհրաժեշտ է կոլխոզը զարգացնելու, այն տնտեսապես և կազմակերպչորեն ամրացնելու և կոլխոզնիկներին ունևոր դարձնելու համար։ Դրա համար, ասում է ընկեր Ստալինը, կա հող, կա մեքենա և սովետական իշխանություն, որն ըստ ամենայնի օժանդակում է կոլխոզային գյուղացիներին թե մարդկանցով, թե ֆինանսներով և թույլ չի տա, որ թշնամի դասակարգի մնացուկները քայքայեն կոլխոզները։ «Ձեզանից միայն մի բան է պահանջվում,— ասում է ընկեր Ստալինը,— աշխատել ազնիվորեն, բաշխել կոլտնտեսային եկամուտները ըստ աշխատանքի, պահպանել կոլտնտեսային գույքը, պահպանել տրակտորներն ու մեքենաները, լավ խնամել ձին, կատարել ձեր բանվորա-գյուղացիական պետության առաջադրանքները, ամրացնել կոլտնտեսությունները և դուրս վռնդել կոլտնտեսություններից այնտեղ խցկված կուլակներին ու ենթակուլակներին»։[3]

Կոլխոզների ամրացման և կոլխոզային լայն մասսաներին սոցիալիստական շինարարության գործին ակտիվորեն մասնակից դարձնելու գործում մեծ նշանակություն ունեցան ընկեր Ստալինի ցուցումները՝ երկրի տնտեսական և քաղաքական կյանքում կանանց ունեցած գերի մասին։ Ընկեր Ստալինը նշում էր, որ կոլխոզային շարժումն առաջ քաշեց ղեկավար պաշտոններում մի շարք հիանալի ու ընդունակ կանանց։ «Դիտեցեք համագումարը, նրա կազմը, և դուք կտեսնեք, ասում էր ընկեր Ստալինը,— որ կանայք վաղուց արդեն հե-

---

1 «Խորհրդային Հայաստան» № 40, 1933 թ.։

2 Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 510։

3 Նույն տեղում, էջ 508։

տամնաց վիճակից անցել են առաջավորների շարքերը։ Կանայք կոլխոզում մեծ ուժ են։ Գրվանի տակ պահել այդ ուժը՝ նշանակում է հանցագործություն թույլ տալ։ Մեր պարտականությունն է՝ առաջ քաշել կոլխոզներում կանանց և գործի դնել այդ ուժը...։

Ինչ վերաբերում է իրենց՝ կոլխոզնիկուհիներին, ապա նրանք պետք է հիշեն կոլխոզների ուժն ու նշանակությունը կանանց համար, պետք է հիշեն, որ միայն կոլխոզում նրանք հնարավորություն ունեն հավասար ոտ մեկնելու տղամարդու հետ։ Առանց կոլխոզների՝ իրավունքների անհավասարություն, կոլխոզներում՝ իրավունքների հավասարություն։ Թող հիշեն այս մասին ընկեր կոլխոզնիկուհիները, և թող նրանք իրենց աչքի լույսի պես պահեն կոլխոզային կարգերը»։[1]

Ընկեր Ստալինի պատմական ցուցումները հարվածային կոլխոզնիկների առաջին համագումարում նոր, սոցիալիստական գյուղի համար մղվող պայքարի գործողությունների ծրագիր հանդիսացան։

Համագումարին Հայաստանից մասնակցում էին մի շարք կոլխոզների ներկայացուցիչներ, հարվածային կոլխոզնիկներ։ Նրանք համագումարին պատմեցին իրենց դառն անցյալի և ազատ ու կենսուրախ ներկայի մասին, այն մասին, թե ինչ է տվել իրենց կոլխոզային կարգը։ Աշտարակի շրջանի Եղվարդ գյուղի ընկեր Ստալինի անվան կոլխոզի ներկայացուցչի կողմից համագումարին ներկայացված զեկուցման մեջ ասված է.

«... Լեռների շուրջպարում տեղավորված մեր գյուղը նախկինում պատկանում էր էջմիածնի վանքին։ Արգավանդ հողերի մեծ մասը գտնվում էր վանքի տրամադրության տակ, իսկ մնացածը՝ «թագավորական» էր։ Աշխատում էինք օրն ի բուն այդ հողերի վրա, կալի ժամանակ վանքը բերքի մեծ մասը «բահրա» էր վերցնում, իսկ «թագավորականի» մարդիկ շոքում էին մեր բկին ու մնացածը տանում որպես տուրք։ Մեր արյունը ծծող կուլակներ էլ կային... որոնք կապալով հող էին վերցնում կամ գնում էին վանքից «բահրայի» իրավունքը և մեր քրտինքի հաշվին ուռչում-տոզում։

Մեզանից շատերը հողազուրկ էին, լծկան չունեին։ Գյուղը խորթ մայր էր շատերիս համար, թողնում էինք տուն ու տեղ... ցրվում էինք դես ու դեն՝ «մի փոր հացի» աշխատանք գտնելու։ Անիծված օրեր էին»։[2]

Մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում հայ ժողովրդի հիմնական մասը կազմող աշխատավոր գյուղացիությունը քայքայվում էր, նրա դրությունը ծանր էր ու եղեռնական։ Եվ ահա «եկավ սովետական իշխանությունը և նրա հետ էլ եկան պայծառ օրեր,— գրում են Եղվարդի կոլխոզնիկները... Մեր գյուղն էլ հասավ Լենինի խոսքը, որ միևնույն է՝ մանր տնտեսությամբ կարիքից դուրս չես գա»։[3]

Մինչև 1933 թ. Հայաստանում ամրապնդվեցին, առաջավոր դարձան հարյուրավոր կոլխոզներ, դրանց թվում էին Աշտարակի շրջանի Եղվարդ գյուղի, Դիլիջանի շրջանի Ջարխեչ գյուղի, Ստեփանավանի շրջանի Կալինինոյի և բազմաթիվ ուրիշ գյուղերի կոլխոզները։

Հայաստանի կոլխոզներում լայն ծավալ ստացավ սոցիալիստական մրցա-

---

1 Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 513։

2 «Խորհրդային Հայաստան», № 36, 1933 թ., փետրվար։

3 Նույն տեղում։

ցությունը, որը հսկայական դեր կատարեց Երկրորդ հնգամյակի դիրեկտիվները բոլշևիկորեն կատարելու ուղղությամբ։ Ղամարլուի շրջանի հարվածային կոլխոզնիկների հավաքը՝ քննելով հարվածային կոլխոզնիկների համամիութենական առաջին համագումարի արդյունքները, որոշում է սոցիալիստական մրցության դուրս գալ Հայաստանի մյուս բամբակագործական և այգեգործական շրջանների հետ։ Ախտայի շրջանի հարվածային կոլխոզնիկների հավաքը գարնանացանի նախապատրաստման համար մշակեց կոնկրետ միջոցներ այն հաջողությամբ սկսելու և ավարտելու համար։ Հավաքի որոշման մեջ ասվում է. «Ընդունելով հարվածային կոլտնտեսականների համագումարի կոչը, մենք մտնում ենք բարձր բերքատվության, սերմացուի լրիվ գանձման, գարնանացանի հաջող նախապատրաստման ու կատարման համար հայտարարված համամիութենական մրցության մեջ»։[1]

Հայաստանի կոլխոզնիկները բոլշևիկյան պայքար ծավալեցին առաջնորդի ցուցումները և համագումարի դիմումը գործի վերածելու համար։ Ղուրդուղուլիի շրջանի Մեծ Շահրիար գյուղի կոլխոզի փետրվարի 23-ի ժողովը քննեց համագումարի արդյունքները և կոլխոզի 1933 թ. արտադրական պլանը։

Հարվածային կոլխոզնիկների առաջին համագումարի արդյունքները քննվեցին Համամլուի «26»-ի անվան կոլխոզի փետրվարի 21-ի նիստում։ Ժողովը որոշեց փետրվարի 25-ին կազմակերպել փորձնական գարնանացան։

Ախտայի շրջանի Ալափարս և Արզաքյանդ գյուղերի կոլխոզները համագումարի դիմումը և ընկեր Ստալինի ցուցումները կենսագործելու նպատակով, փոխադարձ սոցմրցման պայմանագիր կնքեցին 1933 թ. գարնանացանի գործը կազմակերպելու համար։

Արզաքյանդի և Ալափարսի կոլխոզնիկները կոչով դիմեցին Հայաստանի բոլոր կոլխոզնիկներին, որտեղ ասվում էր, որ հանձն են առնում պայքարել երկրորդ հնգամյակի առաջին գարնանացանը հաջողությամբ նախապատրաստելու և կատարելու, սոցիալիստական դաշտերի բարձր բերքատվությունն ապահովելու համար»։[2]

Ռեսպուբլիկայի կոլխոզները և աշխատավոր մենատնտեսները երկրորդ հնգամյակի առաջին գարնանացանը ավարտեցին հաջողությամբ և հարվածային կոլխոզնիկները իրենց ռեսպուբլիկական համագումարը եկան զգալի նվաճումներով։

1933 թ. հունիսի 27-ին գումարվեց Հայաստանի հարվածային կոլխոզնիկների առաջին համագումարը։ Համագումարը քննեց գարնանացանի արդյունքները և բերքահավաքի նախապատրաստման խնդիրները։ Համագումարը իր առաջին երախտագիտության խոսքն ուղղեց ընկեր Ստալինին։[3]

Հարվածային կոլխոզնիկները խոսք են տալիս առաջնորդին, որ կսովորեն աշխատել և պայքարել ստալինաբար։[4]

Մինչև սոցիալիստական ռևոլուցիան, «Մեր նախկին կյանքի վայրենի շահագործման պայմաններում,— գրում են հարվածային կոլխոզնիկները,— ազգային կոտորածների գազանային խրախճանքի ժամանակ, որ տեղի ունե-

---

[1] «Խորհրդային Հայաստան» № 48, 1933 թ.։
[2] «Խորհրդային Հայաստան» № 56, 1933 թ.։
[3] Նույն տեղում, № 137, 1933 թ.։
[4] Նույն տեղում։

ցավ նախ ցարական ռեժիմի, իսկ հետո դաշնակների, մենշևիկների և մուսավաթականների օրոք», երբ կալվածատերերը, կուլակները, վաշխառուները և հոգևորականությունը աշխատավոր գյուղացու վերջին շապիկն էին հանում, ահա այդ ժամանակ մեզ համար չէր կարող լինել բարեկեցիկ կյանք։[1]

Այժմ սովետական կարգերում աշխատում ենք «առանց սարդերի և տրզրուկների, առանց հին և նոր շահագործողների, առանց ստրկացման ու շահագործման»։[2]

Հայաստանի հարվածային կոլխոզնիկների համագումարը մի կոչով դիմեց Հայաստանի կոլխոզնիկներին և աշխատավոր գյուղացիներին՝ ամրացնելու կոլխոզները, որպես աշխատավոր գյուղացիության բարեկեցիկ կյանքի միջոց, պայքարելու բերքատվության բարձրացման, կոլխոզային սեփականության պաշտպանության համար։

Ինչպես հարվածային կոլխոզնիկների համագումարի դիմումը, այնպես էլ բոլշևիկների պարտիայի և սովետական կառավարության դիրեկտիվները նոր խթան հանդիսացան Հայաստանի կոլեկտիվ շարժման հետագա ծավալման և կոլխոզների ամրացման համար։

Կոլխոզները ամրացնելու, կոլխոզային սեփականությունը պաշտպանելու տեսակետից զգալի նշանակություն ունեցավ կոլխոզային ապարատի ստուգումն ու զտումը։ Մինչև 1933 թ. հոկտեմբերի 1-ը ստուգումն ու զտումն անցան ռեսպուբլիկայի 769 կոլխոզ, ստուգման ենթարկվեցին 2143 վարչատնտեսական աշխատող։[3]

Հայաստանի կոլխոզային գյուղացիությունը 1933 թ. գարնանացանը կատարեց անհամեմատ ավելի կազմակերպված, կարճ ժամկետում և բարձր որակով, քան անցյալում։ Ռեսպուբլիկայի կոլխոզների ամբողջ ցանքի տարածությունը, աշնանացանի հետ միասին, կազմեց 164 հազար հեկտար, մոտ 18 հազար հեկտարով ավելի, քան 1932 թվականին։[4]

Զգալի չափով բարձրացավ կոլխոզնիկներին ընկնող ցանքատարածությունը,[5] որը բացատրվում է ոչ միայն կոլխոզների քանակային ընդհանուր աճով, այլև նոր հողային տարածությունների յուրացմամբ։ Կոլխոզային կարգերի առավելությունների շնորհիվ, պարտիայի և կառավարության աջակցությամբ անցյալում մեծ քանակությամբ խոպան և անօգտագործելի հողեր ստալինյան հնգամյակների տարիներին դարձան պիտանի դաշտեր, որոնք ոռոգման միջոցով օգտագործվեցին բամբակի ցանքատարածության, խաղողի այգիների և պտղատու բույսերի համար։

1932 թվի համեմատությամբ ռեսպուբլիկայի ընդհանուր ցանքատարածությունը 1934 թվին աճեց 12,5 տոկոսով։ Ցանքի և բերքահավաքի ժամկետների կրճատման ագրոտեխնիկական ձեռնարկումների կիրառման, գյուղատնտեսության մեքենայական բազայի ուժեղացման շնորհիվ, ինչպես և կոլխոզներում աշխատանքի կազմակերպման ու կորուստների դեմ ծավալված պայքարի միջոցով պայմաններ ստեղծվեցին թե տեխնիկական կուլտուրաների

---

[1] «Խորհրդային Հայաստան», № 137, 1933 թ.։

[2] Նույն տեղում։

[3] Հայկական ՍՍՌ ՊԿԱ ֆ. 128, գ. 1273, թ. 1։

[4] Դիմում Հայաստանի բոլոր կոլտնտեսական գյուղացիներին, էջ 5, Գյուղհրատ, 1933 թ.։

[5] Հայկական ՍՍՌ ՊԿԱ ֆ. 40/113, գ. 2124, թ. 5։

և թե հացահատիկային մշակույթների բերքատվությունը բարձրացնելու համար։

Սոցիալիստական սեկտորը գյուղում, մանավանդ տեխնիկական կուլտուրաների մշակության շրջաններում գերակշռող բարձրության հասավ։

1933 թ. բերքահավաքի կազմակերպված անցկացման և բերքի բաշխման արդյունքները նոր հոսանք առաջացրին դեպի կոլխոզները։

Հայաստանի կոլխոզները պարտիայի 17-րդ համագումարը դիմավորեցին աննախընթաց նվաճումներով։ Ռեսպուբլիկայի բազմաթիվ առաջավոր կոլխոզներ և մի շարք շրջաններ իրենց լավագույն ցուցանիշներով արժանացան Պարտիայի 17-րդ համագումարի անվան կարմիր տախտակին։ Այդ առաջավորների թվումն էին Վաղարշապատի, Ղուլդուղուլու, Ղափանի, Լենինականի և Գորիսի շրջանները։ Առաջավոր կոլխոզներից էին Սիսիանի շրջանի Բորիսովկայի կոլխոզը, որը 1933 թվականի բոլոր պետական պարտավորությունները կատարել էր ժամանակին։

1934 թ. սկզբներին Բորիսովկա գյուղի աշխատավորության 85 տոկոսը ընդգրկված էր կոլխոզում։ Նույն շրջանի Սայբալուի կոլխոզը զգալի չափով բարձրացրել էր բերքատվությունը, ստանալով յուրաքանչյուր հեկտարից 9,5 ցենտներ միջին բերք։ Գյուղի աշխատավորական տնտեսությունների 87 տոկոսը 1933 թ. բերքի բաշխումից հետո ընդգրկվել էր կոլխոզում, կոլխոզը ժամանակից շուտ կատարել էր բոլոր պետական պարտավորությունները։ Այդպիսի առաջավոր կոլխոզների թիվը Հայաստանում 100-ից անցնում էր։

Էջմիածնի շրջանի Փարաքար գյուղի կոլխոզը 1933 թվին իր բամբակի հանձնման պլանը կատարեց 133 տոկոսով, իսկ 1934 թվին՝ 183 տոկոսով։ Իր տնտեսական տարին կոլխոզը փակեց բարձր ցուցանիշներով նաև մյուս մշակույթների գծով։ Ոգևորված իրենց լավ աշխատանքի արդյունքներով, Փարաքարի կոլխոզնիկները Հայաստանի սովետների 8-րդ համագումարին ներկայացրին մի զեկույց, որտեղ նրանք գրում էին.

«... Դաշնակցության օրոք ազգային կռիվների ռազմաբեմ դարձած, համատարած սովի և անելանելի կարիքի մեջ թաղված, հողից ու ջրից զրկված, Փարաքարի կուլակության դառնագին լծի տակ տառապող նախկին աշխատավոր գյուղացիությունը շնորհիվ կոմունիստական պարտիայի ու նրա իմաստուն ղեկավարի՝ սիրելի մեծ ուսուցիչ ընկեր Ստալինի և սովետական իշխանության հոգատար վերաբերմունքի... կոլտնտեսական գյուղացիները անվերադարձորեն բռնել են ունևոր կյանքի ուղին։ Այսօր ինչքան պայծառ է լուսավորում արևը մեր երկրում, ինչքան սիրուն են ու բերքով լի մեր դաշտերը։ Եվ այդ բոլորը կատարվեց պարտիայի ղեկավարությամբ, կոլեկտիվ. կյանքի, մեքենայացված կոլեկտիվ տնտեսության, հարվածայնության լայն ծավալման, դասակարգային թշնամու դեմ համառ պայքարի միջոցով»[1]

Ընկեր Ստալինը պարտիայի 17-րդ համագումարում տված իր քաղաքական հաշվետվության մեջ, բնութագրելով մեր նվաճումները գյուղատնտեսության բնագավառում, ասում է.

«Գյուղատնտեսության վերակազմակերպման ժամանակաշրջանը, երբ կոլտնտեսությունների քանակը և նրանց անդամների թիվը աճում էին բուռն տեմպերով, արդեն ավարտված է, ավարտված է դեռևս 1932 թվին։

[1] Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 112, գ. 835, թ. 30։

Հետևաբար, կոլեկտիվացման հետագա պրոցեսը ներկայացնում է կոլտնտեսությունների կողմից գյուղացիական անհատական տնտեսությունների մնացորդների աստիճանաբար ներծծելու և վերադաստիարակելու պրոցեսը։

Այս նշանակում է, որ կոլտնտեսությունները հաղթանակել են վերջնականապես և անդառնալիորեն»։[1]

Կոլխոզային կարգերի հաղթանակը ապահովված էր։ Այժմ անհրաժեշտ էր կազմակերպել կոլխոզային արտադրությունը, ամրացնել նրա գործնական ղեկավարությունը։ Այդ իսկ նպատակով մեծ քանակով ձեռնհաս մարդիկ գյուղ ուղարկվեցին մշտական աշխատանքի, որոնց թիվը Հայաստանում հասնում էր 1500-ի։ 1932—1934 թ. թ. կոլխոզները ամրացան, կոլխոզների և կոլխոզնիկների եկամտաբերությունը զգալի չափով ավելացավ, իսկ այդ նվաճումները ձեռք բերվեցին գյուղատնտեսության մեջ կուլակային սաբոտաժն ու վնասարարությունը ջախջախելու միջոցով։

Չնայած այդ հաջողություններին, մի շարք վայրերում գյուղական կազմակերպությունների կողմից արհեստական խոչընդոտներ էին ստեղծվում կոլեկտիվացման աճի դեմ։ Այդ առթիվ ՀԿ(բ)Պ 9-րդ համագումարը պարտիական կազմակերպություններին ցուցում տվեց վճռական պայքար մղելու կոլխոզային աճի բնագավառում գոյություն ունեցող թերությունները վերացնելու համար։ Համագումարը իր որոշումներում առանձնապես շեշտում է, որ պետք է բոլշևիկյան պայքար ծավալել ընթացիկ տարում՝ 1934 թ. Հայաստանի սոցիալիստական գյուղատնտեսությունը նոր՝ ավելի բարձր տնտեսական, քաղաքական մակարդակի հասցնելու համար, որը համապատասխանի անդասակարգ հասարակություն կառուցելու հնգամյակի վիթխարի խնդիրներին։[2]

ՀամԿ(բ)Պ Անդրերկոմը ընկեր Բերիայի ղեկավարությամբ բացահայտեց ռեսպուբլիկայի որոշ օրգաններում բուն դրած թշնամական, բուրժուա-նացիոնալիստական տարրերի կողմից՝ պարտիայի քաղաքականությունը գյուղում խեղաթյուրելու փաստերը, որոնք մասնավորապես արտահայտվել էին մի շարք լեռնային շրջաններում։ Անհրաժեշտ եղավ Անդրերկոմի և անձամբ ընկեր Բերիայի միջամտությունը՝ լեռնային շրջանների դրությունը լավացնելու համար։ Այդ նպատակով Անդրերկոմը ունեցավ իր 1934 թ. մայիսի 21-ի հայտնի որոշումը՝ Բասարգեչարի, Ապարանի, Նոր Բայազետի, Արթիկի և Մարտունու շրջանների մասին։ Այդ որոշման համաձայն խոշոր օժանդակություն տրվեց հիշյալ շրջանների կոլխոզները ամրացնելու, գյուղատնտեսության մեքենայական բազան ուժեղացնելու, կուլտուր-կենցաղային և տնտեսական շինարարություն ծավալելու, դեպի անհատական սեկտորը գոյություն ունեցող ոչ ճիշտ վերաբերմունքը վերացնելու ուղղությամբ։ Անդրերկոմի սույն որոշման կենսագործման շնորհիվ, այդ շրջանների կոլխոզները զգալի չափով ամրացան թե տնտեսապես և թե կազմակերպչորեն։

Պարտիայի և կառավարության որոշումների կատարման միջոցով 2-րդ հնգամյակի առաջին տարիներից որոշ բեկում ստեղծվեց նաև անասնաբուծության զարգացման բնագավառում։ Անասնաբուծության զարգացման համար կարևորագույն նշանակություն ունեցավ ՀամԿ(բ)Պ Կենտկոմի 1934 թ. հու-

---

[1] Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 550։

[2] ՀԿ(բ)Պ 9-րդ համագումարի բանաձևից, էջ 4, Երևան, 1934 թ.։

լիսյան պլենումի որոշումը։ Անասնաբուծության բնագավառում վերելք ստեղծելու համար պլենումը անհրաժեշտ համարեց ցանքի պետական պլանի օրինակով սահմանել անասնաբուծության զարգացման պետական պլան, ընդ որում պլենումը որոշեց լիովին ազատել պետությանը հացահատիկ և այլ մթերքներ հանձնելուց 1934 թվին երկու միլիոն հեկտար և 1935 թ. հինգ միլիոն հեկտար հացաբույսերի, կերաբույսերի և գետնախնձորի ցանք՝ կոլխոզների անասնաբուծական ու ձիաբուծական ապրանքային ֆերմաների կերի բազայի ընդարձակումը հեշտացնելու համար։[1] Պլենումի որոշմամբ պետական առաջադրանք սահմանվեց սովխոզների և կոլխոզների ապրանքային ֆերմաների զարգացման, կոլխոզնիկների կովազրկության վերացման, ինչպես և մատղաշների աճեցման համար։ Սահմանվեց նաև կաթ արտադրելու պլան։ Այս որոշումների հիման վրա, 1934 թվից Հայաստանում անասնաբուծության զարգացման ասպարեզում որոշակի վերելք սկսվեց, մանավանդ սոցիալիստական սեկտորում։ Անասունների գլխաքանակի աճի պատկերը կարելի է տեսնել հետևյալ աղյուսակում։[2]

	1933 թ.	1935 թ.
Ձիեր	43,2	44,7
Խոշոր եղջերավոր անասուններ	486,0	558,2
Ոչխար և այծ	611,4	719,4
Խոզ	26,8	53,2[3]

Կոլխոզների անասունների գլխաքանակը նույն թվի հունվարի 1-ի տվյալներով կազմում էր. ձիեր՝ 14,1 հազար, խոշոր եղջերավոր անասուններ՝ 128,8 հազար, ոչխար և այծ՝ 202,4 հազար և խոզեր՝ 19,3 հազար գլուխ։[4]

Հոտի մետիզացիայի միջոցով որոշակի քայլեր կատարվեցին նրա ցեղային հատկությունները լավացնելու ուղղությամբ։ Մի շարք կոլխոզներում կազմակերպվեցին ցեղական ֆերմաներ, ինչպես նաև ցեղական սովխոզներ (Լոռու սովխոզ)։ 1934 թվին կոլխոզային ապրանքային ֆերմաների թիվը հասավ 650-ի, որոնք ընդգրկում էին ամբողջ հանրային հոտը։ Անասնաբուծության զարգացման գործում խոշոր էր մասնագիտացված կաթնաանասնապահական սովխոզների դերը, որոնց թիվը 1934 թվին հասնում էր 8-ի։ Այդ տարիներին կազմակերպվեցին նաև երկու ոչխարաբուծական սովխոզներ։ Կաթնաանասնապահական սովխոզներում խոշոր եղջերավոր անասունների թիվը 1932 թ. հասնում էր 13130 գլխի, որից կովեր 4800 գլուխ, իսկ 1934 թվին միայն կովերի թիվը հասնում է 5368-ի։ Ոչխարաբուծական սովխոզների անասունների թիվը նույն ժամանակ կազմում էր 25 հազար գլուխ։[5]

Ռեսպուբլիկայի գյուղատնտեսության մեջ զգալի տեղ էին գրավում և կարևոր նշանակություն ունեին խաղողագործությունն ու պտղաբուծությունը։ Փոքր Սարդարաբադի և ղռերի ջրանցքները նպաստավոր պայմաններ ստեղ-

---

[1] Ֆ. Մ. Մոլոտով, Անասնաբուծության զարգացման մասին, «Խորհրդային Հայաստան», № 156, 1934 թ.։

[2] Բերված թվերը վերաբերում են յուրաքանչյուր տարեթվի հունվարի տվյալներին (հազարներով)։

[3] „Социалистическое строительство Армянской ССР (1920—1940 гг.), стр. 79.

[4] Там же, стр. 80.

[5] ՀՍԽՀ Կառավարության հաշվետվության նյութեր Խորհուրդների 8-րդ համագումարի առթիվ, էջ 60։

ծեցին նախկին ամայի տարածության վրա կազմակերպելու մի քանի պտղաբուծական և խաղողագործական սովխոզներ։

Հայաստանի համար արդյունաբերական կարևոր նշանակություն ունեցող այդ կուլտուրաների վրա պատշաճ ուշադրություն չէր դարձվում, բերքատվությունը ցածր էր։

Բամբակի, ծխախոտի, ճակնդեղի և այլ կուլտուրաների տարածությունների լայնացման ու այդ մշակույթների բերքատվության բարձրացման համար երկրորդ հնգամյակում մեծ հեռանկարներ բացվեցին, բայց վնասարարության հետևանքով այդ կուլտուրաների զարգացման համար գոյություն ունեցող նպաստավոր պայմանները չօգտագործվեցին ու նրանց բերքատվությունը մնաց ցածր մակարդակի վրա։ Գյուղատնտեսության կարևոր ճյուղերից՝ շերամապահությունը նույնպես անուշադրության էր մատնված։ 1931—1933 թվերի ընթացքում վնասարարական տարրերի կողմից զգալի հարված էր հասցվել շերամապահության կերի բազային, թթենիների տարածությունը զգալիորեն կրճատվել էր։

1933 թվից սկսած, ՀամԿ(բ)Պ Անդրերկոմի որոշման հիման վրա, որոշակի աշխատանք սկսվեց շերամապահության զարգացման ուղղությամբ։

1934 թվի ընթացքում զգալի չափով ավելացավ գյուղատնտեսության մեքենայական բազան։ ՄՏԿ-ների թիվը ռեսպուբլիկայում հասավ 15-ի, իսկ տրակտորային պարկի ընդհանուր կարողությունը 1933 թվի 7048 ձիու ուժից, 1934 թվին բարձրացավ մինչև 12081 ձիու ուժի։ ՄՏԿ-ները իրենց սպասարկումով ընդգրկեցին ռեսպուբլիկայի կոլխոզների 48 տոկոսը, կատարելով նրանց հիմնական աշխատանքները։ Համեմատարար բարձրացավ տրակտորի տարեկան բեռնվածությունը, որի տարեկան միջին արտադրողականությունը 1934 թ. հասավ 174 հեկտարի։ Հայաստանի կոլխոզային դաշտերում 1934 թ. աշխատում էին 12 կոմբայն, 123 կալսող բարդ մեքենա, 825 շարքացան, 180 խուրձկապ մեքենա, 27094 գութան և այլ մեքենաներ։ Հայաստանի գյուղատնտեսությունից արորդ գործածությունից հանելու և այն գութանով փոխարինելու կառավարության դիրեկտիվը հիմնականում իրականացվեց։ Այս բոլորի շնորհիվ բարձրացավ գյուղացիության կոլեկտիվացման մակարդակը, որը 1934 թ. հասավ 45,2 տոկոսի, իսկ ցանքային տարածությունների հանրայնացումը կազմեց 47,3 տոկոս։ 1935 թ. հուլիսի 1-ի տվյալներով ռեսպուբլիկայի 1007 կոլխոզներում ընդգրկված տնտեսությունների թիվը կազմում էր ռեսպուբլիկայի ամբողջ տնտեսությունների 62,4 տոկոսը և ամբողջ ցանքային տարածությունների 67,5 տոկոսը։[1]

Մի շարք շրջաններում կոլեկտիվացման միջին տոկոսը շատ ավելի բարձր էր, քան ռեսպուբլիկական միջինը։ Այսպես, օրինակ, կոլեկտիվացումը Հոկտեմբերյան շրջանում կազմում էր 85,41 տոկոս, Մեղրիում՝ 82,2, Գորիսում՝ 78,1, Լենինականում՝ 76,1, Ղամարլուում՝ 73,6, Ղափանում՝ 74,4 և այլն։[2]

Այդ հաջողությունները ձեռք բերվեցին այն համառ պայքարով, ինչպես ասել է ընկեր Բերիան Վրաստանի Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի 9-րդ համագումարում, որ մղեցին Անդրկովկասի բոլշևիկները ՀամԿ(բ)Պ Կենտկոմի 1931 թ. հոկտեմբերի 31-ի պատմական որոշումը իրականացնելու համար։ «Պետք է ուղղակի ասել,— ասում է ընկ. Բերիան,— որ մենք այս հա-

[1] „Социалистическое строительство Армянской ССР (1920—1940 гг.), стр. 42.
[2] „15 лет Советской Армении в цифрах", стр. 128.

ջողությունները չէինք ունենա, եթե չիներ այն սիստեմատիկ օգնությունը, որ ցույց էին տալիս Համկ(բ)Պ Կենտկոմը և ընկեր Ստալինը, որոնք մտնում էին նույնիսկ մեր աշխատանքի մանրունքների մեջ»։[1]

Եվ այսպես, Համկ(բ)Պ օգնության և անձամբ ընկեր Ստալինի անմիջական հայրական հոգատարության շնորհիվ հսկայական քայլերով առաջ էին գնում Անդրկովկասի Ֆեդերացիայի մեջ մտնող երեք եղբայրական ռեսպուբլիկաները։ Ընկեր Ստալինի ցուցումների կենսագործման գործում խոշոր դեր կատարեց մեծ Ստալինի մարտական զինակից Լ. Պ. Բերիան։

Կոլխոզների ամրացման ու աճի գործում մեծ և վճռական նշանակություն ունեցավ կոլխոզային Ստալինյան նոր կանոնադրության մասսայականացումն ու ընդունումը։ Բավական է հիշել, որ միայն կանոնադրության քննման պրոցեսում ռեսպուբլիկայի 23 հազար աշխատավոր մենատնտեսներ մտան կոլխոզները։

Արդյունաբերության զարգացման և գյուղատնտեսության բարձրացման, ինչպես նաև կոլխոզների տնտեսական-կազմակերպչական ամրացման գործում ձեռք բերված հաջողությունները էլ ավելի մեծ կլինեին, եթե ժողովրդի թշնամիների կողմից չկատարվեր այն վնասարարությունը, որը տեղի է ունեցել հիշված տարիներին։

Սոցիալիստական անդասակարգ հասարակարգի կառուցումը մեր երկրում կատաղի դիմադրության էր հանդիպում ջախջախված թշնամի դասակարգերի մնացորդների կողմից։ Նրանք փորձում էին թուլացնել մեր առաջընթացը։ Միջազգային իմպերիալիզմի կամակատար, սովետական ժողովրդի ստոր դավաճաններ տրոցկիստական-բուխարինյան բլոկը, վաճառվելով իմպերիալիստական ֆաշիստական պետություններին, դիվերսիոն շպիոնական իր գործունեության հետ միասին քոնեց ստոր սպանությունների ուղին։ Մարդկության այդ տականքների, սովետական ժողովրդի և բոլոր աշխատավորների այդ թշնամիների գնդակով ընկավ Ս. Մ. Կիրովը։

Մեծ Ստալինի հավատարիմ զինակից և բոլշևիկների պարտիայի ականավոր գործիչ Կիրովի չարանենգ սպանությունը տեղի ունեցավ 1934 թ. դեկտեմբերի 1-ին, որը մեծագույն զայրույթ առաջացրեց ամբողջ սովետական ժողովրդի մեջ։ Ինչպես ողջ Միության, այնպես էլ Հայաստանի բանվորները, կոլխոզնիկները, սովետական բոլոր մարդիկ իրենց սգո միտինգներում, ժողովներում բուռն զայրույթի բանաձևեր ընդունեցին, որով պահանջում էին ամենայն խստությամբ ոչնչացնել մարդասպանների բանդային։ Միևնույն ժամանակ նրանք խոսք էին տալիս է՛լ ավելի սերտորեն համախմբվել բոլշևիկների պարտիայի շուրջը, մեծ Ստալինի շուրջը, կրկնապատկել, եռապատկել իրենց աշխատանքը, պայքարել հանուն սոցիալիստական հայրենիքի բարգավաճման, ամրացման և հզորացման։

Երևանի բոլշևիկների, բանվորների, կոմերիտականների, զինվորների սգո միտինգը, ընկեր Ստալինին ուղղած իր նամակում գրում էր. «Թշնամու ձեռքով ընկավ մեր պարտիայի անվեհեր, աննկուն մարտիկը, որն իր ամբողջ պանծալի կյանքը նվիրեց Լենինի—Ստալինի պարտիայի գործին, բանվոր դասակարգի գործին...

[1] «Սովետական Հայաստան», № 13, 1934 թ.։

Սիրելի, թանկագին ընկեր Ստալին.

Խոնարհելով մեր գլուխները և մարտական դրոշները Սերգեյ Միրոնովիչի թարմ շիրիմի առաջ, մենք խոստանում ենք... է՛լ ավելի խտացնել մեր մարտական երկաթյա շարքերը քո շուրջը, մեր պարտիայի Լենինյան Կենտկոմի շուրջը, է՛լ ավելի բարձրացնել մեր զգոնությունը, և լինել ավելի անխնա բանվոր դասակարգի բոլոր թշնամիների հանդեպ»։[1]

Այդպիսի բովանդակությամբ բանաձևեր են ընդունվում բոլոր արտադրական ձեռնարկությունների, հիմնարկների և կոլխոզների միտինգներում։ Շատ վայրերից աշխատավորները պահանջում էին իրենց արտադրական ձեռնարկությունը, կոլխոզը, քաղաքը՝ անվանել Կիրովի անվան։

Ամբողջ սովետական ժողովուրդը, այդ թվում և հայ ժողովուրդը Լենինի—Ստալինի մեծ պարտիայի ղեկավարությամբ, մեծ Ստալինի առաջնորդությամբ, ջախջախելով դասակարգային թշնամուն և իմպերիալիստական պետությունների գործակալներին, կատարելով և գերակատարելով երկրորդ հնգամյա պլանի հոյակապ խնդիրները, անշեղորեն առաջ էին գնում սոցիալիստական անդասակարգ հասարակարգ կառուցելու ուղիով։

* * *

Արդյունաբերության և գյուղատնտեսության հսկայական վերելքը, սոցիալիստական տնտեսաձևի վերջնական հաղթանակը, աղքատության ոչնչացումը և շահագործում ծնող պայմանների վերացումը հասցրին աշխատավորների նյութական ու կուլտուրական կենցաղի արմատական բարելավման։

«Շահագործման ոչնչացումը, գործազրկության ոչնչացումը քաղաքում, աղքատության ոչնչացումը գյուղում,— ասում է ընկեր Ստալինը,— սրանք այնպիսի պատմական նվաճումներ են աշխատավորների նյութական դրության բնագավառում, որոնց մասին չեն կարող նույնիսկ երազել էլ «ամենադեմոկրատական» բուրժուական երկրների բանվորներն ու գյուղացիները»։[2]

1930—1934 թ. թ. ժամանակամիջոցում բազմաթիվ արդյունաբերական նոր ձեռնարկությունների գործարկման և շարունակվող ծավալուն շինարարության շնորհիվ խոշոր չափով ավելացավ Սովետական Հայաստանի բանվորների և ծառայողների քանակը՝ 1928 թ. համեմատությամբ 1935 թվին աճելով մոտ 2,5 անգամ։ Միայն ցենզային արդյունաբերության մեջ աշխատողների քանակը նույն ժամանակամիջոցում ավելացավ ավելի քան 250 տոկոսով, իսկ շինարարության բնագավառում աշխատող բանվորների քանակը՝ ավելի քան 3 անգամ։

Ռեսպուբլիկայի 1935 թ. աշխատավարձի տարեկան ֆոնդը մոտ ինն անգամ գերազանցեց 1928 թվի ֆոնդի չափը։ Բանվորների և ծառայողների տարեկան միջին աշխատավարձը 1935 թվին աճեց ավելի քան 3,6 անգամ։

Սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում ձեռք բերված հսկայական նվաճումները 1930—1934 թ. թ. ժամանակաշրջանում արմատապես փոխեցին քաղաքների և արդյունաբերական կենտրոնների դեմքը։ Փոխվեց նաև գյուղի կերպարանքը։

---

[1] «Խորհրդային Հայաստան», № 280, 1934 թ.։

[2] Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 539։

Հայաստանի քաղաքների պատկերը տակավին փոխվում է շնորհիվ այն հսկայական արդյունաբերական և բնակարանային շինարարության, որ կատարվում է սովետական իշխանության գոյության տարիներին, մանավանդ ստալինյան հնգամյակների տարիներին։ Արդյունաբերության զարգացմանը զուգընթաց միանգամայն վերաշինվում են Երևանը և Լենինականը։ Ստեղծվում են նոր սոցիալիստական քաղաքներ ու բանվորական ավաններ, որոնց թվին են պատկանում Ալավերդին, Ղափանը, Հոկտեմբերյանը, Արթիկ Տուֆը, Անի-Պեմզան և այլն։ Կերպարանափոխվում են Կիրովականը, Դիլիջանը, Տորիսը և մյուս շրջանների կենտրոնները։

Բանվորների նյութական-կենցաղային դրության բարելավման բնագավառում առաջնակարգ նշանակություն ուներ բնակարանային շինարարությունը քաղաքներում և բանվորական ավաններում, կոմունալ տնտեսության կարգավորումը։

Առաջին հնգամյակում բնակարանային շինարարության գծով կատարված կապիտալ ներդրումները կազմեցին 22,1 միլիոն ռուբլի։[1] Երկրորդ հնգամյակի ընթացքում բնակարանային շինարարության կապիտալ ներդրումների չափը առաջին հնգամյակի համեմատությամբ ավելանում է չորս անգամ։[2]

1933—1934 թ. թ. քաղաքային և շրջանային գործադիր կոմիտեները և բնակարանային շինարարության կոոպերացիան բնակարանային տնտեսության մեջ ներդնում են 9.987 հազար ռուբլի։ Այդ տարիներին համեմատաբար մեծ գումարներ են ներդնում բնակարանային շինարարության մեջ արդյունաբերական ձեռնարկությունները և պետական մյուս հիմնարկները։ Բնակարանային շինարարությունը հիշված տարիներին արտահայտվել է հետևյալ կերպ. գործադիր կոմիտեները կառուցել են 25,0 տոկոս, բնակշինկոոպը՝ 30 տոկոս, արդյունաբերական ձեռնարկությունները՝ 38 տոկոս, այլ կառուցողներ՝ 7 տոկոս։[3]

Այս բոլորի հետևանքով քաղաքային աշխատավորների բնակարանային պայմանները զգալի չափով բարելավվեցին։ Երևանի, Լենինականի, Ղարաքիլիսայի, Արթիկ-Տուֆի, Անի-Պեմզայի, Ալավերդու, Ղափանի, Քանաքեռգէսի, Դավալուի ցեմենտի գործարանի և ուրիշ բանվորական վայրերի ամբողջ նոր թաղամասերի կառուցումը ցույց էին տալիս բնակարանային շինարարության մեծ թափը, բանվորի և ծառայողի բնակելի տարածության անհատական նորմայի բարձրացումը։

Արդյունաբերության առաջատար ճյուղերի մեծ մասի բանվորներն ու ինժեներա-տեխնիկական կազմը, քիչ բացառությամբ, ապահովվեցին բնակելի տարածությամբ։

Երևանի շուրջը, միանգամայն ամայի վայրերում նոր քաղաքատիպ ավաններ են առաջանում, ինչպիսին են՝ Նոր Արաբկիրը, Բութանիան և ուրիշները։

Նախասովետական Հայաստանի քաղաքները՝ Երևանը և Ալեքսանդրոպոլը համարյա զուրկ էին կոմունալ անհրաժեշտ ձեռնարկություններից և պայմաններից։ Միայն սովետական իշխանության օրոք քաղաքների կոմունալ տնտեսու-

[1] Социалистическое строительство Армянской ССР (1920—1940 гг.), стр. 19.

[2] Նույն տեղում, էջ 21։

[3] ՀՍՍՀ Կառավարության հաշվ. նյութեր, Խորհուրդների 8-րդ համագումարում, էջ 154։

թյունը դրվեց ուշադրության կենտրոնում։ Առաջին հնգամյակում Հայաստանի կոմունալ տնտեսության մեջ ներդրվեց 12,7 միլիոն ռուբլի։[1] Միանգամայն նոր նյութական-տեխնիկական հիմքի վրա ստեղծվեց Երևանի քաղաքային տնտեսությունը, հնգամյակի վերջում շահագործման հանձնելով մի շարք խոշոր կոմունալ կառուցումներ՝ տրամվայը, նոր ջրմուղը, բաղնիքը և այլն։ Ծավալվեցին քաղաքի կոյուղու կառուցման, ինչպես և քաղաքի բարեկարգման աշխատանքները։ Կոմունալ շինարարությունը ավելի ծավալելու նպատակով երկրորդ հնգամյակի միայն առաջին երկու տարիների ներդրումները գերազանցեցին առաջին հնգամյակի ժամանակաշրջանում կատարված ներդրումներին, կազմելով ավելի քան 16,7 միլիոն ռուբլի։

Բնակարանային շինարարության, կոմունալ տնտեսության և ջրամատակարարման գծով զգալի աշխատանքներ ձեռնարկվեցին շրջանային կենտրոններում և գյուղերում։ 1934 թ. 17 շրջանային կենտրոններում ձեռնարկվեց բաղնիքների կառուցման աշխատանքը։ Այդ բաղնիքների մեծ մասը շահագործման հանձնվեց նույն տարում։

Առաջին հնգամյակի վերջին տարիներին և երկրորդ հնգամյակի սկզբներին մեծ ծավալ ստացավ գյուղերի վերակառուցումը և կոլխոզնիկների անհատական բնակարանային շինարարությունը։ Այսպես, օրինակ, Ղամարլուի շրջանի Գյոդաքլու գյուղի կոլխոզի ընդհանուր ժողովը 1934 թ. դեկտեմբերին մի դիմում ընդունեց ուղղված Հայաստանի ճարտարապետներին՝ գյուղի վերակառուցման և բնակարանային շինարարության գործում իրենց օգնելու վերաբերյալ։ Կոլխոզնիկներն իրենց դիմումում գրում են. «Դեկտեմբերի 1-ին բերքի բաշխում կատարելուց հետո մենք, կոլխոզնիկներս հավաքվեցինք քննելու մեր կուլտուրական կյանքի կազմակերպման հարցերը։

Մենք պարտիայի ղեկավարությամբ այս տարի հաստատուն կանգնել ենք ունևոր կյանքի ճանապարհի վրա...

Մենք ուզում ենք ապրել նոր, մաքուր, հողից բարձր, գեղեցիկ ու լուսավոր բնակարաններում։

Մենք ուզում ենք ունենալ կանաչազարդ լայն փողոցներ։

Մենք ուզում ենք հավասարվել քաղաքի կուլտուրական կյանքին։

... Այս տարի մեր կոլտնտեսությունը կառուցել է հանգստի և կուլտուրայի պարկ, բաղնիք, ծննդատուն, ուզում ենք կառուցել նաև ձմեռային ակումբ, կուլտուրական ձևի գոմ և ուրիշ շենքեր, գյուղն էլեկտրոֆիկացիայի է ենթարկված, բայց այս դեռ քիչ է։

Մեր նոր, ունևոր կյանքին համապատասխան ուզում ենք ունենալ լավ կառուցված տներ, կուլտուրական սոցիալիստական տիպի գյուղ...»։[2]

Ղամարլուի շրջանի Գյոդաքլու գյուղի կոլխոզի այս դիմումը բացառություն չէր։ Իրենց գյուղերի վերակառուցման և կուլտուրական ու այլ տեսակի շինարարության պլան են կազմում նաև բազմաթիվ այլ գյուղեր։

Արդյունաբերության ծավալուն շինարարության և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հաղթանակի շնորհիվ լուրջ նվաճումներ ձեռք բերվեցին աշխատավորների նյութական դրության բարելավման, նրանց կենցաղի ու կուլտուրայի զարգացման բնագավառներում։ Բարձրացավ աշխատավորների գնողունակությունը, թե քաղաքում թե գյուղում հսկայական ծավալ

[1] „Социалистическое строительство Армянской ССР (1920—1940 гг.). стр. 19.
[2] «Խորհրդային Հայաստան», № 290, 1934 թ.։

ստացավ պետական և կոոպերատիվ առևտուրը։ Եթե մանրածախս ապրանքների շրջանառությունը 1928 թվին քաղաքում կազմում էր 44,2 միլիոն ռուբլի, իսկ գյուղում 14,5 միլիոն ռուբլի, ապա 1933 թվին այն հասավ քաղաքում՝ 172,8 միլիոն ռուբլու, իսկ գյուղում՝ 75,2 միլիոն ռուբլու։ Մեծ թափով զարգացավ շրջանառությունը հասարակական սննդի ասպարեզում։ Քաղաքում 1933 թ. հասարակական սննդի հիմնարկների շրջանառությունը 1928 թ. մակարդակը գերազանցեց 10 անգամ, իսկ գյուղում՝ ավելի քան 20 անգամ։ Հընգամյակի վերջում սկիզբ առավ սովետական առևտրի մի նոր տեսակ՝ կոլխոզային առևտուրը, որը զգալի չափով լավացրեց քաղաքային բնակչության մատակարարման գործը։

Երկրի ինդուստրացման և գյուղի կոլեկտիվացման հիման վրա աշխատավորների բարեկեցության բարձրացումը նյութական լայն հնարավորություններ ստեղծեցին կուլտուրայի, կրթության, առողջապահության, արվեստի, գիտության և գրականության զարգացման համար։ Ստալինյան հնգամյակների տարիներին վիթխարի թափ ու ծավալ ստացավ ժողովրդական լուսավորության գործը։ Ընդհանուր պարտադիր տարրական ուսումը ծավալվեց հնգամյակի սկզբից, իսկ 7-ամյակի ծավալով՝ 1932 թվից սկսած։ 1932—1933 ուսումնական տարում դպրոցների քանակը հասնում էր 1099-ի, իսկ սովորողների ընդհանուր քանակը՝ 179,2 հազարի։[1]

Հասկանալի է, որ դպրոցական ցանցի այս աճը իր հերթին պահանջում էր դպրոցական նոր շենքերի ծավալուն շինարարություն։ Միայն երկրորդ հնգամյակի առաջին տարիներին ավարտվեց և շահագործման հանձնվեց 119 դպրոցական շենք 728 սենյակներով։ Բացի այդ, 45 դպրոց կառուցվեց գյուղական ազգաբնակչության միջոցներով, 1934 թվին ավարտվեց կիսավարտ 116 դպրոցական շենք և սկսվեց 60 նոր դպրոցների կառուցումը։ Առաջին հնգամյակի սկզբում նախադպրոցական ցանցում ընդգրկված էր երեխաների ընդհանուր քանակի 12,2 տոկոսը, իսկ 1932—33 ուս. տարում մանկապարտեզների և մանկահրապարակների թիվը հասնում էր 1692-ի, որտեղ ընդգրկված էր 4—6 տարեկան երեխաների 54,5 տոկոսը։ 1934—1935 թ. թ. ուս. տարում բոլոր ստացիոնար և սեզոնային նախադպրոցական ցանցում ընդգրկված էր հիշված հասակ ունեցող ամբողջ երեխաների 75,7 տոկոսը։[3]

Ժողովրդական տնտեսության բուռն վերելքը նորանոր կադրերի հսկայական պահանջ էր ներկայացնում։ Մասնագիտական կադրերի պրոբլեմը, որպես հերթական խնդիր, սուր կերպով կանգնած էր պարտիայի առաջ, մանավանդ հնգամյակի ընթացքում։ Երևանի Մոլոտովի անվան Պետական Համալսարանը, որը սովետական կարգերի ծնունդն է, իր գոյության առաջին տարվանից հանդիսացել է բարձրորակ մասնագետների պատրաստման գլխավոր օջախ։ 1930 թվին համալսարանի ֆակուլտետների բազայի վրա կազմակերպվեցին մի շարք բարձրագույն հաստատություններ՝ բժշկական, գյուղատնտեսական, շինարարական, քիմիական, մանկավարժական, ֆինանսա-տնտեսագիտական և անասնաբուժական ինստիտուտները։ Դրանց կողքին գործում էին բազմաթիվ տեխնիկումներ և մասնագիտական այլ դպրոցներ, որոնք նույնպես տալիս էին

[1] „Социалистическое строительство Армянской ССР (1920—1940), стр. 109.
[2] ЦГА Армянской ССР. ф 40/113, д. 2217, л. 46.
[3] Там же, ф. 113, д. 2272, л. 1—2.

միջին որակի կադրեր։ Ռեսպուբլիկայի բարձրագույն ուսումնական հաստատությունները, մինչև 5-ամյակի վերջը տվին ավելի քան 1500 մասնագետ։ 1932—33 ուս. տարում բարձրագույն դպրոցներում սովորողների թիվը հասնում էր 3500-ի, տեխնիկումներում և մասնագիտական կադր պատրաստող մյուս դպրոցներում սովորում էին ավելի քան 7500 մարդ, բանֆակներում՝ ավելի քան 2600, իսկ ֆաբրիկա-գործարանային դպրոցներում՝ 3400 աշակերտներ։

Բացի ռեսպուբլիկայի ուսումնական հաստատություններից, Միութենական զանազան կենտրոններում սովորում էին Հայաստանի հազարավոր երիտասարդներ, որոնք սիստեմատիկաբար լրացնում էին ռեսպուբլիկայի մասնագիտական կադրերի պակասը։

Կուլտուրական ռևոլուցիայի իրականացման հիմնական նախադրյալներից մեկն անգրագիտության վերացումն էր։ Բոլշևիկների պարտիան և սովետական իշխանությունը մեծագույն եռանդով պայքար սկսեցին աշխատավորների միջից անգրագիտությունը և կիսագրագիտությունը վերացնելու համար։ 1930—1934 թ. թ. այդ ուղղությամբ խոշոր աշխատանք կատարվեց Հայաստանում։

Մինչև սովետական կարգերի հաստատվելը Հայաստանում ազգաբնակության մեծ մասը անգրագետ էր, սովետական կառավարության գործադրած ջանքերի շնորհիվ, Հայաստանի ազգաբնակչության գրագիտությունը հետզհետե աճում է։ Եթե 1922 թվին մինչև 49 տարեկան հասակ ունեցող ազգաբնակության միայն 22,8 տոկոսն էր գրագետ, ապա 1926 թ. 35,7 տոկոսը, 1931 թ. 50,4 տոկոսը, 1933 թվին 81,6 տոկոսը, 1934 թ. 95 տոկոսը։[1]

Այսպիսով, Սովետական Հայաստանը հաջողությամբ իրականացնում է պարտիայի 16-րդ համագումարի որոշումը և ՀամԿ(բ)Պ Անդրերկրամի 1934 թ. մայիսի 31-ի դիրեկտիվը՝ 1935 թվին անգրագիտությունը լրիվ չափով վերացնելու մասին։

Քաղաքական լուսավորական ամբողջ աշխատանքի նպատակն էր է՛լ ավելի բարձրացնել բանվորների, կոլխոզնիկների և ծառայողների գիտակցական վերաբերմունքը դեպի սոցիալիստական արտադրությունը, սոցիալիստական սեփականության պաշտպանությունը և սոցիալիզմի երկրի հզորության ուժեղացումը։

1930—1934 թ. թ. արագ կերպով ավելանում է քաղլուս հիմնարկների ցանցը։ 1929 թ. գործում էին 39 ակումբ, 163 խրճիթ-ընթերցարան և 147 կարմիր անկյուն, իսկ 1933 թվին ակումբների թիվը հասնում է 90-ի, խրճիթ-ընթերցարանների՝ 317-ի, կարմիր անկյունների թիվը՝ 250-ի։ Գյուղական շատ խրճիթ-ընթերցարաններ վեր են ածվում կոլխոզ-ակումբների, բարձրանում է նրանց դերը ու փոխվում աշխատանքի բովանդակությունը։ Այդպիսի ակումբների քանակը 1934 թ. հասնում էր 160-ի։[2]

Առաջին հնգամյակում և երկրորդ հնգամյակի առաջին երկու տարիներին աննախընթաց զարգացում ունեցավ հրատարակչական գործը։ Այդ ժամանակամիջոցում զգալիորեն ավելացավ գեղարվեստական գրականության հրատարակությունը, կրկնապատկվեց նրա տիրաժը։ Գեղարվեստական գրականության հրատարակման պատկերը տալիս են հետևյալ թվերը։ 1928 թվին հրա-

[1] ЦГА Армянской ССР, ф. 113, д. 2272, л. 18.
[2] ЦГА Армянской ССР, ф. 113, д. 2272, л. 23.

տարակվել է միայն 53 անուն գիրք, 194 տպագրական մամուլի ծավալով, իսկ 1934 թվին 183 անուն՝ 1534 տպագրական մամուլի ծավալով։

Գեղարվեստական գրականության տիրաժը 1928 թ. եղել է մոտ 148,600, 1930 թ. 400.000 և 1934 թ. 800.000։[1]

Այդ ժամանակամիջոցում թարգմանվել և հրատարակվել են մարքսիզմ-լենինիզմի կլասիկների մի շարք աշխատություններ, որոնց թվում Կ. Մարքսի «Կապիտալ»-ի 1-ին հատորը, «Բրյումերի 18-ը», Լենինի Ընտիր երկերի ժողովածուն, ընկեր Ստալինի «Լենինիզմի հարցերը», «Գյուղացիական հարցը» ժողովածուն, Էնգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», «Անտի-Դյուրինգը» և մի շարք այլ աշխատություններ։

Զգալի տեղ է գրավել հայ, ռուս և համաշխարհային գրականության կլասիկների երկերի հրատարակման գործը։ Այդ ժամանակ լույս տեսան Շիրվանզադեի գեղարվեստական երկերի լիակատար ժողովածուն՝ 8 հատորով, Հ. Պարոնյանի երկերի չորս հատորը, Սունդուկյանի, Մեծարենցի, Պ. Դուրյանի, Հ. Թումանյանի և ուրիշների երկերը։

Ռուս կլասիկներից հրատարակվեցին Պուշկինի, Տոլստոյի, Շչեդրինի, Դոստոևսկու, Տուրգենևի, Գոգոլի, Չեխովի և ուրիշ գրողների առանձին երկերը։ Համաշխարհային գրականության կլասիկներից հրատարակվեցին Շեքսպիրի, Ֆիրդուսու, Բալզակի, Ֆլոբերի, Ատենդալի մի շարք աշխատությունները։

Հրատարակվեցին աչքի ընկնող ռուս սովետական գրողների վեպերը, պատմվածքները և դրամատիկական գրվածքները։ Հայպետհրատը հրատարակեց Մ. Գորկու «Վ. Ի. Լենին» աշխատությունը, Շոլոխովի «Հերկած խոպան» վեպը, Ֆադեևի «Ջախջախում»-ը և այլն։

Առանձնապես աճում է մանկա-պատանեկական գրականությունը։ Զգալի լին նվաճումները պարբերական մամուլի հրատարակության գծով։ 1934 թ. լույս էր տեսնում 50 թերթ, 1929 թ. 10-ի փոխարեն։ Ռեսպուբլիկայի 19 շրջաններ ունեին իրենց թերթերը, առանձին շրջաններում հրատարակվում էին երկու լեզուներով (Ստեփանավան՝ հայերեն, ռուսերեն, Իասարգեչար՝ հայերեն, աղրբեջաներեն)։ Ամսագրերի քանակը հասնում էր 20-ի։

1930—1934 թ. թ. ժամանակաշրջանում Սովետական Հայաստանի գրականությունն իր բովանդակությամբ, գեղարվեստականությամբ հանդիսանում էր Սովետական ամբողջ Միության գրական ֆրոնտի մի ջոկատը։ Նրա զարգացման ուղին՝ սովետական կուլտուրայի ու գրականության հետագա զարգացման, ծաղկման համար ընկեր Ստալինի կողմից կանխանշված ուղին է՝ ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական։

Այդ զարգացումը տեղի է ունենում գրականության մեջ դիմակավորված և բացահայտ թշնամական իդեոլոգիայի՝ բուրժուա-նացիոնալիստական, աջ և տրոցկիստական տարրերի դեմ մղվող պայքարի պայմաններում։

ՀամԿ(բ)Պ Կենտկոմի 1932 թ. ապրիլի 23-ի որոշումը «Գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին» հանդիսացավ սովետական գրականության զարգացման նոր էտապի անշեղ ծրագիրը, որտեղ պարզորոշ կերպով ցույց էր տրվում սովետական գրականության ու արվեստի հետագա զարգացման ուղին։

[1] ЦГА Арм. ССР, ф. 113 д. 2272, л. 23.

Բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ, նրա ստալինյան քաղաքականությամբ ողջ Միության, այդ թվում և Սովետական Հայաստանի գրականության զարգացումը գնում է դեպի միասնություն, թե՛ կազմակերպչորեն և թե՛ գաղափարական ստեղծագործական մեթոդով, հաղթահարելով և ջախջախելով իր զարգացման ճանապարհին եղած բոլոր դժվարություններն ու արգելքները։

Սովետահայ գրողների գործերում այդ ժամանակամիջոցում ավելի են դրսևորվում սոցիալիստական ռեալիզմի տարրերը։ 1930—1934 թ. թ. Հայաստանի գրողների գրական գործունեությունը բնութագրվում է երկրի սոցիալիստական վերակառուցման համար մղվող պայքարի պատկերումով։ Գրողներն իրենց երկերում արտացոլում էին երկրի ինդուստրացումը, նրա ծնունդ հանդիսացող գործարանի, ֆաբրիկայի աշխատանքը, գյուղի համատարած կոլեկտիվացումը։

1930—1934 թ. թ. ժամանակաշրջանում սովետահայ գրողների երկերում բնութագրականը սոցիալիզմի կառուցման հերոսներն են, արտադրության առաջավորները։ Այդպիսի թեմաներով են գրված Ստ. Զորյանի «Սպիտակ քաղաք» վեպը, Արազու՝ «Լուսնի շողերով», «Ջրվեժի ցոլքում», Ն. Զարյանի «Ռուշանի քարափը» պոեմը, «Հացավան» վեպը, Գ. Սարյանի «Երեք երգ» և շատ ուրիշ գրողների բազմաթիվ գործեր, որոնք նվիրվել են սոցիալիստական շինարարությանը թե քաղաքում թե գյուղում։

1934 թ. օգոստոսի սկզբներին տեղի ունեցավ Հայաստանի սովետական գրողների առաջին համագումարը, որն ընթացավ սոցիալիստական ռեալիզմի սկզբունքի պաշտպանության նշանաբանով։ Հայաստանի գրողներն իրենց համագումարում հակահարված տվեցին նացիոնալիստներին, որոնք փորձում էին անցկացնել իրենց «ազգային առանձնահատկությունների խտացման» բուրժուա-նացիոնալիստական ռեակցիոն թեորիան։ Նույն թվի օգոստոսին տեղի ունեցավ սովետական գրողների առաջին Համամիութենական համագումարը։ Համագումարում Ա. Ա. Ժդանովի արտասանած ճառը և Մաքսիմ Գորկու զեկուցումը հանդիսացան սովետական գրականության հետագա զարգացման իդեական-ստեղծագործական ծրագիրը։

1930—1934 թ. թ. զգալի վերելք ապրեցին թատրոնը, կինոն, նկարչությունը, ճարտարապետությունը, որոնք առանձնապես ավելի մեծ թափով աճեցին երկրորդ հնգամյակի առաջին տարիներին։ Աճեց Հայաստանի թատրոնի ստեղծագործական կարողությունը, բարձրացավ բեմադրությունների որակը, ավելացավ թատրոնների թիվը և հանդիսատեսների քանակը։ Սունդուկյանի անվան Պետական թատրոնի գործունեությունը 1930—1934 թ. թ. ապացույց է այն անընդհատ վերելքի մասին, որ ունեցել է թատերական արվեստը Հայաստանում։

Պետական թատրոնը իր ռեպերտուարի մեջ այդ տարիներին ունեցել է բազմաթիվ արժեքավոր բեմադրություններ։ Այսպես, օրինակ, 1930 թվից նա բեմադրել է «Ցասում» պիեսը, որը դիտել են տասնյակ հազարավոր հանդիսատեսներ։

Պետ. թատրոնը այդ տարիներին բեմադրել է Սունդուկյանի «Պեպոն», Մաքսիմ Գորկու «Հատակում» հռչակավոր պիեսը, որի բեմադրությունը առաջին անգամ տեղի է ունեցել 1932 թվի հոկտեմբերի 4-ին, Վ. Վաղարշյանի «Օղակում»-ը, Պոգոդինի «Տեմպը»։ 1933 թ. բեմադրվում է Մաքսիմ Գորկու

«Եգոր Բուլիչևը», 1934 թ. նրա տրիլոգիայի երկրորդ պիեսը՝ «Դոստիգաևը և ուրիշները», Շիրվանզադեի «Պատվի համար» և ուրիշները։

Այդ տարիներին Սունդուկյանի անվան Պետ. թատրոնը ունեցել է բազմաթիվ գաստրոլներ եղբայրական ռեսպուբլիկաներում, որտեղ գտել է մեծ ընդունելություն և արժանացել է բարձր գնահատության։ Թատրոնը իր գոյության 10-ամյակին պարգևատրվում է «Կարմիր Դրոշի» շքանշանով։ Լենինականի թատրոնը, որը հիմնվում է 1928—1929 թ. թ., 1930 թ. կոչվել է Պետական երկրորդ թատրոն։ Հնգամյակի վերջում Հայաստանում գործել է ութ թատրոն, իսկ 1934 թ. 16 թատրոն, որոնք բեմադրել են 1400 ներկայացում։ Այդ ներկայացումները դիտել են 580 հազար մարդ։ Այդ բոլորը վկայում են մեր ռեսպուբլիկայի քաղաքի և գյուղի աշխատավորների կուլտուրական վերելքի, նրանց նյութական ու կենցաղային բարեկեցության բարելավման մասին։

Կուլտուրայի կարևորագույն նվաճումներից մեկը հանդիսացավ Հայկական ՍՍՌ Օպերայի և Բալետի Պետական թատրոնի հիմնումը։

Անդրֆեդերացիայի Գործադիր Կոմիտեի Նախագահությունը այդ առթիվ ուղարկեց ջերմ ողջույնի հեռագիր, որտեղ ասված է. «Երևանի Պետական Օպերայի և Բալետի թատրոնի հիմնադրումը նոր փառավոր հաղթանակ է երկրի կուլտուրական շինարարության ասպարեզում։

Օպերայի և Բալետի թատրոնի ստեղծումը մի նախադրյալ պետք է հանդիսանա սոցիալիզմի կառուցման պահանջներին համապատասխան ազգային երաժշտական կուլտուրայի զարգացման համար»։[1]

Օպերայի թատրոնի հիմնադրումը ողջունեցին Ռուսթավելի թատրոնի կոլեկտիվը, Լենինգրադի Օպերայի և Բալետի թատրոնի կոլեկտիվը և այլն։

Սոցիալիստական շինարարության բուռն վերելքը երկրի էկոնոմիկայի բոլոր բնագավառներում, բարձրորակ կադրերի պատրաստումը՝ բարենպաստ պայմաններ ստեղծեցին գիտա-հետազոտական աշխատանքի զարգացման համար։ Առաջին հնգամյակի ընթացքում և երկրորդ հնգամյակի առաջին տարիներին ավելացավ գիտա-հետազոտական ինստիտուտների և հիմնարկների թիվը, որը 1934 թ. հասավ 40-ի։ 1930 թվին կազմակերպվեց Կառուցումների ինստիտուտը, որը զբաղվում էր տեղական շինանյութերի ուսումնասիրման և շինարարության մեջ նրանց օգտագործման հարցերով։ 1931 թվին հիմնվեց Կիրառական-հանքաբանական ինստիտուտը։

1930 թվին Վաղարշապատում սկսում է աշխատել բամբակագործական զոնալ կայանը, իսկ 1931 թ. ռեսպուբլիկական պտղա-բանջարաբուծական զոնալ կայանը։ Բամբակենու ագրոտեխնիկայի, նրա տեսակների ուսումնասիրման հարցերը հանդիսանում էին Վաղարշապատի զոնալ կայանի աշխատանքի գլխավոր առանցքը։ Կարևոր աշխատանք էր կատարում նաև պտղաբանջարաբուծական զոնալ կայանը, որը նույնպես զբաղվում էր զանազան պտուղների սելեկցիայի, տեսակների հետազոտության և նրանց ագրոտեխնիկայի հարցերով։

Զգալի աշխատանք էր կատարում Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտը, որի միջոցով թարգմանվում և հրատարակվում են մարքսիզմի-լենինիզմի կլասիկների մի շարք աշխատությունները։

---

[1] «Խորհրդային Հայաստան», 1933 թ. № 17։

Ռեսպուբլիկայում դիտա-հետազոտական աշխատանքով զբաղվում էին նաև Կուրորտոլոգիայի և ֆիզիո-թերապիայի ինստիտուտը, Անասնաբուժական ինստիտուտը, բարձրագույն մի շարք դպրոցներ և այլն, որոնք զգալի գործ են կատարում։

Աչքի ընկնող հաջողություններ գոյություն ուներ կարարվեստի զարգացման ուղղությամբ։ Բարձրացել էր արվեստագետների իդեական-քաղաքական մակարդակը, աճել նրանց ստեղծագործական թափը։ Ավեստագետների հին կադրերը իրենց ստեղծագործություններում սկսում են ավելի ու ավելի դրսևորել սոցիալիստական շինարարության թեմաները, տալով արժեքավոր գործեր։ Աճում է երիտասարդ արվեստագետների մի ստվար սերունդ, որը սկսում է խանդավառ կերպով աշխատել նկարչության, քանդակագործության, գծագրության բնագավառներում։

Բուռն զարգացում է ապրում երաժշտությունը Հայաստանում։ Գրվում են ինքնուրույն օպերաներ և մի շարք սիմֆոնիկ գործեր։

Առաջին հնգամյակի սկզբին Հայաստանում կար միայն երեք կինոկայան, հնգամյակի վերջում դրանց թիվը հասավ 66-ի, իսկ 1934 թ. 110-ի։ Այդ ժամանակամիջոցում Երևանում և Լենինականում երկու հնչյուն կինոթատրոններերի հիմք դրվեց։ Կինոներ հաճախողների թիվը առաջին հնգամյակի ընթացքում կազմել է մոտ 4,2 միլիոն մարդ, իսկ միայն 1934 թ. 1,129,600 մարդ։[1]

Մինչև առաջին հնգամյակը Հայկինոն նկարահանել է չորս գեղարվեստական նկար, իսկ հնգամյակի ընթացքում՝ 17։ 1933 թվին նկարահանվել է «Երկու գիշեր» պատմական ռևոլուցիոն գեղարվեստական նկարը, իսկ 1934 թ. «Գիքորը» կենցաղային նկարը, «Նամուս», «Զարե», «Տունը հրաբխի վրա», «Զամանլու», «Անուշ» և այլ նկարներ։

1930—1934 թ. թ. մեծ ծավալ ստացավ առողջապահության գործը Հայաստանում։

Առաջին հնգամյակի ընթացքում առողջապահության շինարարության բնագավառում կատարվեց 12,5 միլիոն ռուբլու ներդրում, իսկ երկրորդ հնգամյակում այն քառապատկվում է։ Միայն 1933—1934 թ. թ. կապիտալ ներդրումները կազմում են 6,8 միլիոն ռուբլի, որը գլխավորապես հատկացվում է կապիտալ շինարարությանը, հիվանդանոցային կառուցումների ընդարձակմանը։ Բուժական ստացիոնար հիմնարկները առաջին հնգամյակում, համեմատած 1928 թվի եղածի հետ ավելանում են 11-ով։ Առաջին հնգամյակի վերջում Հայաստանում կար 41 հիվանդանոց 1638 մահճակալով, 149 ամբուլատորիա և պոլիկլինիկա։

Այսպիսով, Հայաստանի աշխատավորների բուժ. օգնության գործը զգալի չափով լավանում է, որն ավելի մեծ ծավալ է ստանում հետագա տարիներին։

Սոցիալական ապահովագրության համար հատկացվող միջոցները 1929 թ. 4,288 հազար ռուբլուց, 1934 թ. կազմեց ավելի քան 21 միլիոն ռուբլի։

ՀամԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի 1934 թ. նոյեմբերյան պլենումը ընկեր Ստալինի առաջարկով քննեց և պատմական որոշում ընդունեց հացի և մի քանի այլ մթերքների քարտային սիստեմը վերացնելու մասին։ Գյուղատնտեսության մեջ կոլխոզների և սովխոզների տիրապետող դիրքը, նրանց կազմա-

[1] Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 40/113, գ. 2217, թ. 57։

կերպական-տնտեսական ամրացման փաստը, հացամթերումների հաջող ընթացքը և հացի աղատ գնման բնագավառում ձեռք բերած հաջողությունները պետության տրամադրության տակ դրին բավականաչափ հնարավորություններ, պայմաններ ստեղծելով քարտային սիստեմի վերացման համար։ Դրա հետ միասին համապատասխան չափով ավելացավ բանվորների և ծառայողների աշխատավարձը։

Կոլխոզային գյուղացիության նյութական դրության բարելավման, կոլխոզների հետագա տնտեսական ամրացման գործում պարտիայի ու կառավարության կողմից ցուցաբերած ստալինյան հոգատարության ցայտուն օրինակ հանդիսացավ ՍՍՌՄ Ժողկոմսովետի և Համկ(բ)Պ Կենտկոմի 1934 թ. դեկտեմբերի 23-ի որոշումը՝ գյուղատնտեսական բանկի կողմից մինչև 1933 թ. հունվարի 1-ը կոլխոզներին բաց թողնված գյուղատնտեսական վարկի պարտքերի վերացման մասին։

Հիշված որոշման համաձայն վերացվեց կոլխոզների ունեցած պարտքերը և չվճարված տոկոսները՝ ընդհանուր գումարով 435,639 հազար ռուբլի։ Հայաստանի կոլխոզները այդ որոշումից շահեցին 4 միլիոն 849 հազար ռուբլի։

Երկրորդ հնգամյակի ընթացքում թե արդյունաբերության, թե գյուղատնտեսության և թե կուլտուրայի բնագավառներում երկրում կատարվող վիթխարի շինարարությունը նոր ազդակ հանդիսացավ աշխատավոր մասսաների նյութական դրության հետագա բարելավման համար։

* * *

Այսպիսով, 1930—1934 թ. թ. Սովետական Միության, այդ թվում նաև Հայկական ՍՍՌ-ի համար հանդիսացավ պատմական հաղթանակների ժամանակաշրջան թե արդյունաբերության, թե գյուղատնտեսության, թե կուլտուրական շինարարության և թե աշխատավորների նյութական դրության հետագա բարելավման բնագավառներում։

Լենինի—Ստալինի պարտիան լուծեց պրոլետարիատի կողմից իշխանությունը նվաճելուց հետո պրոլետարական ռևոլյուցիայի համար ամենադժվարին խնդիրը՝ բազմամիլիոն մանր գյուղացիական տնտեսությունների փոխադրումը խոշոր սոցիալիստական տնտեսության ուղու վրա։

Ստալինյան առաջին հնգամյա պլանի իրականացումով մեր երկրում կառուցվեց սոցիալիստական էկոնոմիկայի հիմքը, ոչնչացվեց գործազրկությունը և մարդու կողմից մարդու շահագործման պայմանները։ Այդ տարիներին պայմաններ ստեղծվեցին աշխատավորների նյութական ու կուլտուրական դրության անընդհատ բարելավման համար։

Կապիտալիստական շրջապատումը ձգտում էր թուլացնել և ջլատել ՍՍՌՄ-ի հզորությունը, այդ նպատակի հետևանքով օգտագործելով տրոցկիստական-բուխարինյան բանդաներին, բուրժուական նացիոնալիստներին, որոնք հանդիսանում էին ֆաշիզմի հավատարիմ ծառաները։ Նրանք դիմում են լրտեսության, վնասարարության, տեռորի ու դիվերսիաների, ձգտելով ՍՍՌՄ-ի պարտությանն ու կապիտալիզմի վերականգնմանը մեր երկրում։

Սովետական իշխանությունը մերկացրեց և ջախջախեց այդ նողկալի վիժվածքներին և ընկեր Ստալինի գլխավորությամբ մոբիլիզացրեց սովետական մարդկանց՝ հանուն սովետական պետության հզորացման, հանուն սոցիալիստական հասարակարգի հաղթանակի։

О. Карапетян

Народное хозяйство Армянской ССР в первые годы второй пятилетки (1933—1934 гг.)

Резюме

В результате выполнения первой пятилетки, советский народ под руководством партии Ленина—Сталина осуществил «основную задачу пятилетки—создание собственной передовой технической базы для социалистической реконструкции всего народного хозяйства». (из резолюции январского пленума ЦК и ЦКК ВКП(б)—1933 г.).

Успехи первой пятилетки создали необходимые предпосылки для дальнейшего мощного роста социализма в СССР, создали базу для построения и осуществления нового пятилетнего плана.

XVII съезд ВКП(б) утвердил новый пятилетний план развития народного хозяйства Союза ССР, являвшийся планом окончательной ликвидации капиталистических элементов и превращения трудящихся страны Советов в сознательных и активных строителей социалистического общества, планом завершения технической реконструкции всего народного хозяйства и коренного подъема жизненного уровня рабочих и крестьян.

Второй пятилетний план предусматривал громадный рост социалистической индустрии. Для Армянской ССР было предусмотрено закончить реконструкцию всего народного хозяйства. При этом особое значение придавалось развитию цветной металлургии.

Дальнейшее развитие пищевой и ряда других новых отраслей промышленности; строительство и ввод в эксплоатацию крупных гидроэлектростанций, объединение ряда ГЭС в единую систему—являлись основными задачами второй пятилетки.

Завершение коллективизации, повышение урожайности сельхозкультур, увеличение тракторного парка и, следовательно, повышение процента механизации полевого хозяйства, развитие ряда технических культур и т. д.—превращали сельское хозяйство республики в передовую отрасль народного хозяйства.

Размер капитального вложения в народное хозяйство Армении, предусмотренный планом второй пятилетки превосходил сумму вложения первой пятилетки более чем в три раза. Так, например, капитальные вложения за первые два года второй пятилетки составило более чем 312 миллионов рублей, т. е. почти столько, сколько было вложено за первую пятилетку.

В течение 1933 и 1934 г. г. были закончены и сданы в эксплоатацию комбинат имени А. Мясникяна в Караклисе (Кировакан), Цементный завод, Ереванская табачная и швейная фабрики, 7 электростанций и ряд других заводов и фабрик. Намного возросло производство электроэнергии. В результате, удельный вес продукции промышленности в народном хозяйстве в 1934 г. составил 64.9%.

Наметились крупные сдвиги в области культурно-бытового строительства. Как в Советском Союзе в целом, так и в Армянской ССР, в первые годы второй пятилетки улучшилось материальное благосостояние рабочих и крестьян, бурными темпами стали развиваться культура, искусство, наука, литература, здравоохранение и т. д.

Мудрая ленинско-сталинская национальная политика нашей партии и Советского Правительства, повседневная помощь и забота товарища Сталина—великого друга армянского народа, помогли нашей республике стать страной передовой индустрии и передового крупного социалистического сельского хозяйства.